

783

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 15

№ 15

Պրոլետարներ բոլոր սրկրների, միացե՛ք!

Ե. Ա. ՊՐԵՕՐԲԱԺԵՆՍԿԻ

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Ա. ԳՈՒԼՈՅԵԱՆ

ԳԻՆԸ 1 Ր. 50 Է.

338.1(47)

Պ-92

07 FEB 2010

7-32

Եւթր տեւր փառանկարէց 9/12-24:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 15

№ 15

Պրոլետարներ լոյր երկրների, ձիացէք!

Ե. Ա. ՊՐԵՐՐԱԺԵՆՍԿԻ



ԳԻՒԼԱՑԻԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՍԻՆ

1003  
12341

Թարգմ. Ա. ԳՈՒԼՈՅԵԱՆ

~~4780~~

4780

783

ՀԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան

ՄԱՍԻՆ—1919.

## ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիւղացի.—Ներկայումս շատ են խօսում գիւղացիական կոմմունաների մասին: Բացատրիր մեզ, թէ էդ ինչ կոմմունաներ են և ինչ օգուտ ունի նրանցից գիւղացին:

ԲՈՂԵԼԻԿ.—Դու որեւէ մի ժամանակ խմբովին փայտ կոտրե՞լ ես, կամ մի որեւէ այլ աշխատանք կատարե՞լ ես:

Գիւղացի.—Պատահել է: Քանի դեռ գոյութիւն ունէր մեր բարինք, նրա արօտատեղը հնձում էինք խմբովին, պատահում էր ճանապարհը շինում էինք խմբովին, կամ փայտ կրում էինք խմբովին: Յիշում եմ, որ ամբողջ գիւղը դուրս էր գալիս աշխատանքի:

ԲՈՂԵԼԻԿ.—Շատ լաւ. այժմ դու պատկերացրու, որ դուք սկսում էք խմբովին հերկել հողը: Դուք արդէն հողը չէք բաժանի մասերի, այլ այն հողը, որ նշանակւած է աշխատանքի համար, միանգամից կհերկէք: Գարնանացանքի համար նշանակւած հողը նոյնպէս միանգամից կհերկէք: Ոչ մէկին հողի առանձին շերտ չի տրւի: Երբ հասնում է հերկելու ժամանակը, ամբողջ խմբակցութիւնը գութաններով դուրս է գալիս դաշտ: Խոտհունձքի ժամանակ խոտադաշտերը հնձում են նոյնպէս խմբովին: Յորենի հնձի ժամանակը որ հասնի, այն ժամանակ նոյնպէս բոլորը միասին կաշխատեն: Դա նշանակում է կոմմունական աշխատանք, այսինքն համայնական, և ոչ թէ այն, որ իւրաքանչիւր առանձին աշխատում է միայն իր համար:

Գիւղացի.—Սպասիր, դու միանգամից շատ բան ասացիր, թող մի հասկանանք: Ամենից առաջ ասա ինձ, այդ կոմ-



մունաների մէջ օչժո՞վ կըսիապէն զրւել, գուցէ և արդէն այդ-  
պիսի օրէնք կայ, թէ՞ ով ուղենայ, նա էլ կմտնի կոմմունայի  
մէջ:

ԲՈՂԷԻԿ.—Հասկանալի է, որ բարի կամքով: Մի՞թէ կա-  
րելի է ստիպել խմբակցութեան մէջ աշխատել մէկին, որն այդ  
բանը չի ուղղում:

ԳԻԼՂԱՅԻ.—Շատ լաւ. իոկ եթէ, օրինակի համար, զիւ-  
ղի մէջ 30 տուն համաձայն են կոմմունայի մէջ մտնել, իսկ  
40 ոչ: Ի՞նչ պէտք է անել այն ժամանակ:

ԲՈՂԷԻԿ.—Շատ հասարակ: Այդ եռեսուն տան համար  
կարւի այնքան, որքան որ նրանց փայն է, իսկ եթէ որեւէ  
վէճ ծագի, հողային կոմիտէն կլուծի:

ԳԻԼՂԱՅԻ.—Ես հիմի մտածում եմ, թէ ովքեր մեր զիւ-  
ղից կհամաձայնեն կոմմունա կազմել: Հաւանակարար ոչ ոք  
չի համաձայնի, եթէ որեւէ օգուտ չլինի:

ԲՈՂԷԻԿ.—Կոմմունայի մէջ կմտնեն ամենից առաջ նրանք,  
որոնց կարիքը կստիպի: Օրինակի համար, աղքատ զիւղացիներ-  
ից մէկը ձի ունի, բայց երասանակներ չունի: Մի ուրիշը  
երասանակներ ունի, բայց գործիքները սարքի են, բայց ձի  
չունի: Շատ օգտակար է նման զիւղացիներին կոմմունայի  
մէջ մտնել.—քո ձին, իմ երասանակները, ցարութիւնի դու-  
թանը, չանդեռն ու սալլը, վերջ ի վերջոյ մենք ունենք այն  
բոլորը, ինչ անհրաժեշտ է հերկելու և ցորենը հաւաքելու հա-  
մար: Կամ վերջները այսպիսի դէպք: Ենթադրենք հարուստ  
զիւղացուց խլեցինք երկու—երեք ձի, իսկ զիւղում ձի չու-  
նեցող զիւղացիներ կան հինգ կամ տաս հոգի, բաժանել ձիան-  
ները չի կարելի. իսկ ի՞նչպէս անել, որ ձիաներից օգուտ  
դուրս գայ աղքատ զիւղացիների համար: Ուրիշ ելք չկայ,  
բացի նրանից, որ պէտք է այդ ձիաները յայտարարել համա-  
նական—կոմմունական և նրանց բանեցնել ամբողջ կոմմունայի  
համար:

ԳԻԼՂԱՅԻ.—Դու ճիշտ ես ասում. եթէ այդ կողմից

մօտենանք կոմմունային, այն ժամանակ մեզ մօտ կդտնւին  
մարդիկ, ովքեր կհամաձայնեն հողը հերկել խմբովին: Մի ու-  
րիշը կցանկանար դուցէ ամեն բան ինքը անել և ոչ ոքի  
հետ չկապել բայց անհրաժեշտութիւնը կստիպի նրան ար-  
տելի (խմբակցութեան) մէջ մտնել: Մեզ մօտ կոմմունա չկայ,  
իսկ այն ձիաները, որոնք խլել են խոշոր հողատէրերից ու  
հարուստ զիւղացիներից, բանեցւում են հերթով: Բայց շատ  
վէճ ու անհամաձայնութիւն կայ: Ասենք, հասաւ իմ հերթը  
ձիուց օգտուելու, օրինակ, խոտ բերելու համար, բայց որով-  
հեաւ օրը անձրեային է, հերթս կորչում է, իսկ մի ուրիշի  
հերթ հասաւ լաւ օրին. նա կվերջացնի իր աշխատանքը նոյն-  
իսկ կէս օրուայ ընթացքում:

ԲՈՂԷԻԿ.—Ահա, դու հարցնում էիր ինձնից, թէ ի՞նչ  
օգուտ կայ կոմմունայից, իսկ հիմի դու ինքդ սկսում ես այդ  
օգուտները հասկանալ:

ԳԻԼՂԱՅԻ.—Ես ի՞նչ գիտեմ որ: Ինչ որ ճիշտ է, էն  
էլ ասում եմ: Իսկ դու բայց և այնպէս պատմիր էլի, թէ ին-  
չո՞վ է օգտակար կոմմունան. եթէ դործը ձեռնառու է, կա-  
րելի է ուղղակի փորձել մեր զիւղում: Ամենից գլխաւորն է,  
զիւղացուն լաւ հասկացնել.—ինչ, ինչպէս և ինչի համար:

ԲՈՂԷԻԿ.—Լաւ, արի հաշւենք կոմմունայի օգուտնե-  
րը: Վերջները որեւէ միջին մեծութիւն ունեցող զիւղ, ինչ-  
պէս օրինակ ձերը: Գիւղում կայ 70 տուն, կնջանակէ աշնա-  
նացանքի համար նշանակւած հողը բաժանելու ժամանակ պէտք  
է այն բաժանել առնւադր 70 կտորի, իսկ եթէ աշխատող  
ձեռքերի համաձայն, այդ գէպքում Երկու անգամ աւելի:  
Պարնանացանքի համար նշանակւած հողը կրկին պէտք է  
բաժանել 70 կտորի, եթէ ոչ 150-ի: Բացի դրանից չափաւ,  
որ ինքդ լաւ գիտես, այնպէս է լինում որ զիւղի ամբողջ  
հողը բաժանւում է միայն երեք մասի—աշնանացանքի, զար-  
նանացանքի և պահեստի (пар): Յաճախ դարնանացանքի հո-  
գեքը լինում են երկու, երեք և աւելի տեղերում, նոյնը և

աշնանացանքի ու պահեստի հողը. կնշանակէ հարկաւոր է լինելու բաժանել հողը ոչ թէ 70 մասի, այլ աւելի շուտ երեք անգամ 70: Այժմ հաշւիր, թէ որքան աշխատանք է կորչում հողը բաժանելու ժամանակ, և ինչքան հող իզուր կորչում է հողամասերի միջև: Երբեմն հողաշերտն այնքան նեղ է լինում, որ մանգաղով երկու անգամ անցնելու համար քիչ է: Ենթադրենք, որ իւրաքանչիւր դեսեատինը բաժանւած է 10 մասի, չնայած խկապէս բաժանւած է լինում 15, 20 և աւել մասերի: Ենթադրենք հողի մի մասը միւս մասից բաժանող միջաշերտի լայնութիւնը հաւասար է 6 վերշոկի: Մի դեսեատինի վրայ միայն միջաշերտերի համար հարկաւոր է 50 քառակուսի սաժէն հող: Դեսեատինը ունի 2400 քառ. սաժէն: Կնշանակէ իզուր տեղը կորչում է դեսեատինի մէկ յիսուններորդական մասը: Ենթադրենք դեսեատինը տալիս է 50 փ. ցորեն. դա նշանակում է, որ հողը մանր մասերի բաժանելու շնորհիւ կորչում է ամեն մի դեսեատին հողից առնազը մէկ փութ հաց: Ամբողջ Ռուսաստանում այդ կորուստը հաւասար կլինի 60000000 փ. այսինքն կորչում է այնպիսի մի քանակութիւն, որը բաւական է Մոսկւան և Պետրոգրադը  $2\frac{1}{2}$  տարի կերակրելու համար, եթէ այդ քաղաքի ամեն մի բնակչին տրւի օրական 1 ֆ. հաց:

Գիւղացի.— Իսկ մեր՝ գիւղացիներին զրուխն անգամ չէր կարող գալ, որ միջաշերտերից այդպիսի վնաս կարող է լինել: Այս տարի մեր գիւղում աշնանացանքի ու գորնանացանքի համար կար 400 դեսեատին հող: Դուրս է գալիս, որ մենք կորցրել ենք 400 փ. ցորեն:

Բոլշեիկ.— Այդ դեռ ևս քիչ է: Հաշւիր մէկ, թէ ինչքան իզուր աշխատանք է կորչում, երբ մէկ հողամասից միւս հողամասն են վաղում:

Գիւղացի.— Գլխաւորն այդ չէ: Հերկելու ժամանակ մանր հողաշերտերի վրայ դժւար է աշխատել. այն դիտես միայն, որ շուտ ու մուտ ևս գալիս: Իսկ երբ հնձում ևս, եր-

կու երեք շաբաթ անցնում ևս, իսկ չորրորդ շաբաթում ցորենը մանգաղի համար արդէն բաւական չէ, բայց անցնել ամբողջ հողաշերտը հարկաւոր է:

Բոլշեիկ.— Ահա ասնում ևս, ոչ թէ ևս, այլ արդէն դու ևս ինչ սեփորեցնում: Բայց տեսնենք, թէ էլ ինչ օգուտներ կարելի է ստանալ կոմմունայից. սկսենք պարարտացումից: Ներկայումս մեր գիւղացիութիւնը վատ է պարարտացնում հողը: Մէկ պատճառն այն է, որ անասունը քիչ է, կնշանակէ և աղբը քիչ է. միւս պատճառն այն է, որ ջանք չի գործ դրւում հիմնաւորապէս պարարտացնել հողը, քանի որ հողի բաժանման ժամանակ հողաշերտը կարող է անցնել մի ուրիշին: Կոմմունայի ժամանակ արդէն համայնական հողը կարելի է պարարտացնել առանց որևէ վտանգի, թէ աշխատանքից կարող են օգտուել ուրիշները: Յետոյ, հեշտ է աւելի ճարել արւեստական պարարտացուցիչ միջոցներ, որոնց գործադրութեան դէպքում հողի պտղաբերութիւնը խիստ բարձրանում է: Յրինակ, Ռուսաստանում վատ պարարտացւած հողի մի դեսեատինը տալիս է 45—50 փ. հաճար, իսկ Դերմանիայում շնորհիւ արհեստական պարարտացման նոյն դեպքում տալիս է 120—150 փ., իսկ Անգլիայում էլ աւելի: Իւրաքանչիւր գիւղացի առանձին վերցրած երկար ժամանակ ծածրակը կքորէ, մինչև որ կվճռէ գործադրել արհեստական պարարտացում: Իսկ կոմմունան այդ բանին կհասնի աւելի շուտ: Կգալ խորհրդային ագրոնոմը, կպատմէ թէ որքան, ինչ և որտեղ վերցնել և կարելի կլինի առանց գործն յետաձգելու սկսել արհեստական պարարտացումը: Իսկ Խորհրդային իշխանութիւնը միշտ էլ աւելի շատ կօգնէ կոմմունային զայն իշխանութիւնը միշտ էլ աւելի շատ կօգնէ կոմմունային արտելին, քան իւրաքանչիւր գիւղացուն առանձին-առանձին վերջրած:

Խմբական հողահերկի ժամանակ կարելի է բաւականաչափ աւելի քիչ յուսով, ձիաներով ու գործիքներով: Կան շատ գիւղաւանական գործիքներ, որոնցով չի կարող օգտուել մանր

ու ինքնուրոյն դիւղացին: Վերցնենք օրինակի համար շողե-  
շարժ դուժանը: Մանր հողամասի վրայ նրանով չի կարելի  
աշխատել, իսկ մեծ հողամասերի վրայ նա բերում է հսկայա-  
կան օգուտ, որովհետեւ հերկում է արագ, խորը և չի պա-  
հանջում ձիու ոյժ: Իսկ չէ՞ որ ձիւներն աշխատութիւնը—դու  
մեր գիւղացիութեան, մանաւանդ նրա աղքատ մասի, ամե-  
նամեծ դժբախտութիւնն է: Վերցնենք կատարելագործւած  
ամերիկական հնձամեքենան: Այդ մեքենան միաժամանակ հրն-  
ձում է, կայսում, էրանում և հացահատիկը տեսակների բա-  
ժանում: Բանեցնել այդ մեքենան տարբեր մարդկանց պատ-  
կանօղ մանր հողաշերտերի վրայ՝ առհնարին է որովհետեւ  
մէկ սեփականատիրոջ հացահատիկը կխառնւի միւսի հացահա-  
տիկի հետ, որոնց բաժանումը յետագայում անհնարին կլինի:  
Իսկ եթէ հողաշերտը միացնենք և վեր ածենք մի մեծ հողա-  
մասի, այն ժամանակ այդ հնձամեքենան մի քանի աշխատա-  
ւորների օգնութեամբ երկու օրուայ ընթացքում կկատարէ այն  
աշխատանքը, որը ներկայումս ձեռքի աշխատանքի գործա-  
դրութեամբ կատարում են տասնեակ աշխատաւոր ձեռներ  
մի քանի շաբթւայ ընթացքում: Իսկ ամենադիւսաւորն այն է,  
որ մեքենան արագ հաւաքում է ցորենը: Բաւական է երկու  
երեք օր լաւ եղանակ որպէսզի գիւղացու բերքը արդէն  
հաւաքւած լինի ամբարներում, ուր նրա համար ոչ մի անձրեւ  
չի կարող թաքսափելի լինել:

Գիւղացի.—Մի՞թէ իսկապէս այդպէս մեքենայ գոյու-  
թիւն ունի: Եթէ գիւղում մերոնց պատմենք, ոչ որ չի հա-  
ւատալ:

Բոլշէիկ.—Դուք կազմակերպեցէք կոմմունա, այն ժա-  
մանակ Խորհրդային իշխանութիւնը ձեզ համար Ամերիկայից  
բերել կապ այդ մեքենան: Շուտով նաեւ մեր գործարանները  
կօղորեն այդպիսի մեքենաներ շինել, որպէսզի ամենքին բա-  
ւականանայ:

Գիւղացի.—Ասա տեսնենք, ի՞նչ կանեն այն ժամանակ

գիւղացիները, եթէ մեքենայի համար բոլորովին քիչ մարդ  
է հարկաւոր լինելու:

Բոլշէիկ.—Բայց դա բոլորովին սարսափելի չէ: Ձեզ  
մօտ անձրեւաձորեր կան:

Գիւղացի.—Սարսափելի չափով շատ: Իւրաքանչիւր  
տարի մէկական զեւեատին ցանքս է օղողում:

Բոլշէիկ.—Ճանապարհները վա՞ռ էն:

Գիւղացի.—Երբ անձրեւ է, անանցանելի ցելս է լինում:  
Ձիւները մահւան դուռն են հասնում, այնքան որ խորն են  
թաղւում:

Բոլշէիկ.—Կամուրջները փտա՞ծ են:

Գիւղացի.—Փռածներն էլ քիչ են: Կան տեղեր, ուր  
բոլորովին չկան:

Բոլշէիկ.—Ել ինչու դու վախեցար, որ մեքենաներ  
գործածելու դէպքում գործ չի լինի անելու: Մեքենան մեզ  
հնարաւորութիւն կապ այնպիսի գործեր անել, որոնց համար  
կամ բաւականաչափ ոյժ չունէինք, կամ միջոցներ չկային և  
կամ ծուլութիւն էինք անում: Մեքենան կարգ կսփորեցնի,  
իսկ աղբոնմը հեռու կը վանէ ծուլութիւնը. այսօր մի օգ-  
տակար աշխատանք ցոյց կտայ, վաղը մի ուրիշը: Եթէ դաշ-  
տային աշխատանքներից յետոյ աղատ ժամանակ մնայ, այն  
ժամանակ կսփորեցնեն ձեզ, իսկապէս ինչպէս պէտք է խնա-  
մել անասուններին, ինչպէս լաւ չաղացնել խոզերին, ինչպէս  
պահել կովերին ախոռում և դաշտ չքշել: Կսփորեցնեն, թէ  
ինչպէս կորելի է, առանց մարգագետինների տարածութիւնը  
մեծացնելու, անասունների համար կեր ճարել: Կսփորեցնեն  
առւոյտ և ուրիշ խոտեր ցանել: Ցոյց կտան ձեզ, թէ ինչպէս  
կաթից մեքենայի միջոցով կարելի է իւր ստանալ: Կսփորե-  
ցնեն, թէ ինչպէս կարելի է բազմացնել թռչուններ, ճագար  
և այլն: Մի խօսքով ամեն բան չի լինի ասել: Այն բոլորը,  
ինչ որ քեզ պատմեցի, եթէ ծայր լսէր, երևի դողը կբռնէր:

Գիւղացի.—Ամեն մարդ չի կարող հասկանալ այն,

ինչ որ դու ասացիր: Բայց հողադործների մեծ ծասը պէտք է հասկանալ իր օգուտը: Վերցնենք, օրինակի համար, ինձ: Այժմ ես ի՞նչ դիւզաւորեալ եմ որ: Փորփրօղ եմ և ոչ թէ դիւզատնտես: Իսկական գութանով երբեք չեմ հերկել, այլ միշտ էլ փորփրել եմ զեփներ միայն մի վերջով խորութեամբ: Աւելի լաւ չէ՞ր լինի, մայր-հողի մասին հող տանել, ինչպէս որ հարկն է: Դու նրան—, նա քեզ:

Բ ու Ղ Լ Ի Կ.—Այժմ դու պէտք է իմանաս, թէ ինչ բան է դիւզական կոմմունան: Դա այն է, որ դաշտում աշխատում ես երկու անգամ պակաս, իսկ բերք հաւաքում ես երկու անգամ աւելի:

Դ ի Լ Պ ա յ ի.—Իսկ կոմմունայի ժամանակ ի՞նչ պէտք է անել մարդերի հետ: Մարդերն էլ պէ՞տք է միացնել: Յամենայն դէպս դրանից բան չի դուրս գալ: Փորձեցէք մի, իմ Լալայիս համոզել, որ Դուներայի ու Մարիամի հետ պէտք է փորել, աշխատել մի մարդի վրայ առանց թումբերով իրաբից բաժանելու:

Բ ու Ղ Լ Ի Կ.—Մարդը—դա փոքրիկ բան է: Մարդերի վրայ մերենայ չի կարելի գործադրել: Եթէ իւրաքանչիւր տուն սկզբում ունենայ իր օգտական մարդը, մեծ վնաս չի լինի: Միայն վերջ ի վերջոյ այստեղ էլ գործը կվերջանայ մի մեծ հասարակական մարդ հիմնելով, որովհետեւ իսկական կոմմունայի մէջ եկամուտները բաժանելու կարիք չի զգացւի:

Դ ի Լ Պ ա յ ի.—Ահա ես հէնց ուղղում էի էդ բանի մասին հարցներ: Դու ամբողջ ժամանակ խօսում ես այն մասին, թէ ինչպէս պէտք է խմբովին հողը հերկել ու բերքը հաւաքել: Հիմի ենթադրենք, որ բերքը հաւաքւած է. ի՞նչ պէտք է անել նրա հետ: Եթէ բաժանել է պէտք, էն ժամանակ ինչպէ՞ս բաժանել, բնտանիքի անդամների թւի թէ աշխատաւորների թւի համապատասխան, կամ դուրէ բոլորովին հարկաւոր չէ՞ բաժանել: Բացատրիր ամեն բան ինչպէս հարկաւոր է:

Բ ու Ղ Լ Ի Կ.—Իսկական կոմմունարը պէտք է ոչինչ չկիտի:

Նա պէտք է համարէ այսպէս,—իմ ամբողջ ունեցւացքը—քոն է և քո ամբողջ ունեցւացքը—իմն է: Մենք միասին, ընդհանուր ոլժերով ստացանք բերք և պէտք է այժմ հաշւենք այն ընդհանուրի սեփականութիւն: Մի թիւ կարելի է ճիշտ հաշիւ անել, թէ ով ինչքան աշխատանք է գործ դրել և ով իսկական հաշւով ինչքան պէտք է ստանալ: Բայց հասկանալի բան է, որ մեր գիւղացին միանգամից իսկական կոմմունիստ դառնալ չի կարող: Հարկաւոր է, որ ինքը կենքը ցոյց տալ նրան այդ բանը: Առաջին անգամին լաւ կլինի, եթէ զիւղը կամ զիւղի մի մասը վճռի կոմմունա ստեղծել՝ միայն հողը մշակելու համար, իսկ բերքը չետոյ կբաժանւի այս կամ այն ձևով: Իսկ բաժանել կարելի է զանազան տեսակի: Առաջին, աշխատաւորների թւի համաձայն: Օրինակի համար, եթէ կոմմունայի մէջ աշխատում են—դու, քո կինը և քո հասակաւոր որդին, այն ժամանակ հաղահատիկը բաժանելու ժամանակ դուք կստանաք երեք փայ, ով ունի երկու աշխատաւոր, կստանայ երկու փայ, ով ունի չորս աշխատաւոր, նա կստանայ չորս փայ և այլն: Այսպիսի բաժանումը կարծէք թէ ամենից արդարացին է, որովհետեւ իւրաքանչիւր բնտանիք ստանում է ճիշտ այնքան, որքան որ նա աշխատանք է գործ դրել ընդհանուր գործի համար: Բայց իսկապէս այստեղ պարզ անարդարութիւն է: Մի տան մէջ, ասենք, երեք աշխատաւոր կայ, իսկ ուտողներն ընդամենը չորս կամ հինգ հոգի են: Մի ուրիշ տան մէջ, ասենք զինւորի բնտանիքի մէջ կան հինգ մանր երեխաներ, իսկ աշխատում է միայն նա ինքը: Այնտեղ չորս ուտողի համար կստանան երեք փայ, այստեղ վեց ուտողի համար կստանան մէկ փայ: Այսպիսի բաժանման մէջ ոչ միան արդարութիւն, այլ նաև միտք չկայ: Այսօր ես կնոջս հետ առանց երեխաների ստանում եմ երկու փայ, իսկ զինւորի կինը հինգ երեխաների հետ ստանում է մէկ փայ: Կանցնեն նի քանի տարիներ, և ամեն բան հակառակը կլինի: Ես կունենամ հինգ աշխատանքի անընդունակ երեխաներ, իսկ

զինւորի կնոջ երեսաները կդառնան ոչ միայն ուսուցիչներ, այլ և աշխատաւորներ: Առաջ ես օգտուում էի աշխատաւորների համաձայն բաժանումից, իսկ այժմ վնասուում եմ: Իսկ եթէ մի քանի տարիների ծայրերը իրար միացնենք, այն ժամանակ կարգուի, որ այդպիսի բաժանումը ոչ միայն անարդարացի է այլ և ոչ ոքի օգտակար չէ, եթէ իհարկէ միայն այս օրւայ և վաղւայ մասին չես մտածում:

Գիւղացի.—Դա ուղիղ է: Մի մոռացիր և այն, որ հինգ երեսանով մի փայ ստանալով անհնարին է ապրել: Զինւորի կնոջ համար աւելի ձեռնտու կլինի, որ իր հողամասն ինքն անձամբ մշակի, օգնութիւն խնդրելով համայնքից:

Բոլշէիկ.—Կարելի է և այլ կերպ բաժանել և դա աւելի արդարացի կլինի: Օրինակ այսպէս—Ինչքան կոմմունայի բոլոր ուսուցիչների համար հարկաւոր է հաց, կարտոֆիլ, բանջարեղէն, միս, լոյսւմ են կոմմունայի ամբարները, որտեղից իւրաքանչիւր ընտանիք վերցնում է այնքան, որքան որ իրեն հարկաւոր է, առանց որեւէ հաշւի: Մթերքների աւելորդ մասը վաճառւում է պետութեանը, իսկ ստացւած փողը կամ ապրանքները բաժանւում են աշխատաւորների միջև: Այդ ձևը աւելի արդարացի է, բայց անհաւասարութիւնը մնում է մասամբ և այժմ: Օրինակ, մեր զինւորի կինը իր երեսաներին կուշտ կկերակրէ, իսկ հազցնել նրանց չի կարող, որովհետեւ մի հասակաւոր աշխատաւոր կստանայ իր բաժին կտորեղէնը այնքան, որքան որ կհասնի զինւորի կնոջ ամբողջ ընտանիքին:

Բայց կոմմունայի ստացւածքներից ամենաարդարացի և կոմմունիստորէն օգտակու ձևը կլինի հետեւեալը: Ամենակարեւոր մթերքները, որոնց մէջ պակասութիւն չի զգացւում, դործ են ածում կոմմունայի բոլոր անդամներն ըստ նրանց կարիքների. իսկ տնտեսութեան կամ գնած առարկաները, որոնց մէջ պակասութիւն է զգացւում, հաւասար կերպով բաժանւում է կոմմունայի բոլոր անդամների միջև:

Գիւղացի.—Ասա՛ խնդրեմ, իսկ ինչպէս է այն կոմմուն-

նաներում, որոնք այժմ հիմնւած են ամբողջ Ռուսաստանում. կանոնադրութեան համաձայն ստացած եկամուտը պէտք է կիսել թէ՞ ոչ:

Բոլշէիկ.—Կան զանազան կանոնադրութիւններ: Կան կոմմունաներ, ուր օրոշւած է եկամուտը բաժանել աշխատաւորների թւի համաձայն: Կան և այնպիսիները, որտեղ եկամուտը բաժանւում է նայած թէ ինչ կապիտալ կամ ունեցւածք է մտցրել կոմմունայի մէջ նրա ամեն մի մասնակիցը: Սա արդէն իսկական կոմմունա չէ, այլ նման է առետրական տան, ուր աւելի ստանում է նա, ով որ աւելի և ունի: Այդպիսի կոմմունաները հարուստ գիւղացիների նման են, որովհետեւ նրանց մօտ են սովորել: Կան կոմմունաներ, ուր միայն աւելորդը բաժանւում է աշխատաւորներին թւի համաձայն: Ես տեսել եմ և այնպիսի կոմմունաների կանոնադրութիւն, ուր ընդունւած է իսկական ու արդարացի բաժանում,—բոլորին նրանց կարիքների համեմատ:

Գիւղացի.—Իսկ յայտնի չէ՞ արդեօք, թէ որպիսի կոմմունաներում դործը գնում է աւելի լաւ: Գուցէ կան կոմմունաներ, որոնք արդէն կուել են ու բաժանւել:

Բոլշէիկ.—Այժմ դեռ ոչինչ յայտնի չէ: Երբ բերքը արդէն հաւաքւած կլինի, այն ժամանակ արդէն որեւէ բան կլսենք կամ լրագրներնւմ կկարդանք: Զէ՞ որ այժմ ամբողջ Ռուսաստանում շատ կոմմունաներ են առաջ եկել, ամենից քիչը 500 հատ: Եւ իւրաքանչիւրն իր ուղածին պէս իր ճանապարհը կհարթէ: Շատ հասկանալի է, որ մի քանիսները ցրիւ կգան, իսկ միւսները կամրապնդւեն և կբայնացւեն:

Գիւղացի.—Ես կարծում եմ, որ աւելի շուտ կլինի այն, որ կհաջողեն իրար ու կբաժանւեն իրարից: Անհամաձայնութիւնը մեր ժողովրդի մէջ խիստ զարգացած է: Եթէ ես հէնց հիմի մեր գիւղը կոմմունայի վերածեմ, շատ և շատ խօսքեր կլսեմ: Սկզբում այսպիսի խօսակցութիւն կլինի. —Ես, ահա, լաւ աշխատող եմ, իսկ Սիդորովը կամ Կարպովը

ծուլեր են: Կոկոսներ հողը հերկել միասին, իսկ դուրս կգայ  
այն, որ ես կհերկեմ, իսկ նրանք կնայեն: այդպիսիներին ես  
ի՞նչ պէտք է պատասխանեմ:

Բոլշևիկ.— Դու ասա, որ կոմմունան,— դա աշխատա-  
ւորների համայնք է, և ոչ թէ ծուլերի անկեղանոց: Եթէ Սի-  
դորովը կամ Կարպովը անուղղելի ծուլեր են, եթէ դա ճիշտ  
է, և ոչ թէ հարուստների բամբասանք աղքատների հասցէին,  
այդ գէպքում ոչ ոք ձեզ չի ստիպի ընդունել նրանց համայն-  
քի մէջ: Իսկ եթէ կոմմունայի մէջ աշխատանքի ժամանակ  
կադրուղի, որ նրանք ծուլեր են, այդ գէպքում դուք կարող  
էք նրանց դէմ միշտ էլ միջոցներ ձեռք առնել, տուգանք նշա-  
նակել, աւելորդ աշխատանք տալ, իսկ եթէ այդ բոլորը չի  
օգնի,— բոլորովին դուրս քշել կոմմունայից: Կոմմունայի մէջ  
ծուլին այնքան էլ հեշտ չէ ծածկւելը: չերկել թէ հնձել—բո-  
լորի աշխատանքը աչքի առաջ է:

Գիւղացի.— Շատ լաւ, ենթադրենք ծուլերից աղատուե-  
ցինք: Բայց տես թէ էլի ինչ կասեն: Իմ ձին, ասենք, վատ  
է, իսկ հարեանիս ձին՝ լաւն է: Իմ գործիքները ոչ մի բանի  
պէտք չեն, իսկ նրա գործիքները բոլորն էլ կարգի են: Եւ  
ահա նա կասէ ինձ— ինչպիսի դու ինձ համար ընկեր-կոմմու-  
նար ես, երբ ես կոմմունայի համար տալիս եմ աւել, քան  
դու, իսկ պէտք է ստանամ այնքան, որքան կստանաս դու:

Բոլշևիկ.— Դու քո բաղաբացուն, որ ունի լաւ ձի,  
ասա՛ այսպէս: Այսօր քո ձին լաւ է, իսկ վաղը նրանից կճնայ  
միայն անպէտք կաշի: Ձին սատկում է, նորը ոչ մի տեղ չի  
կարելի գնել, իսկ երբեք էլ փող չի լինում: Իսկ կոմմունայ  
մէջ, եթէ նրա ձին սատկի, նրա հողամասը առանց մշակելու  
չի թափ: Եթէ կոմմունայի մէջ կային 15 ձի, բայց թափ  
14 հատ, այդ գէպքում թափած ձիաները կաշխատեն մի քիչ  
աւելի, իսկ ամբողջ կոմմունիստական հողը մշակւած կլինի:  
Կոմմունան— դա դժբախտութեան գէպքում մի տեսակ ընկե-  
րական ապահովագրութիւն է: Եթէ որեւէ մէկի հետ դժ-

բախտութիւն պատահի, այն ժամանակ նրան ամեն բան հա-  
ւասար չափով կըտրւի: Իւրաքանչիւր առանձին գիւղացի ա-  
նասունի սատկելուց կամ հրդեհից կարող է վերջում այնպէս  
սնանկանալ, որ բաքձրանալ այլեւս հնարաւոր չի լինի: Իսկ  
կոմմունայի մէջ նա միայն կթերւի իսկ ընկերները չեն թող-  
նի, որ ընկնի: Առաջ իւրաքանչիւրն իր ձեռներեցութեամբ  
կամ սնանկանում էր և կամ հարստանում: Կոմմունայի մէջ  
ամեն մէկը աշակցում է միւսին. մէկին յաղթել, դա նշանա-  
կում է ամբողջ կոմմունային յաղթել, իսկ դա հեշտ չէ:

Իսկ յետոյ դու ասա՛ քո ընկերոջը, որը լաւ ձի ունի և  
որը ափսոսում է իր լաւ ձին վատի կողքին գնել, ցոյց  
տուր, որ նա վարպետ է կոպէկ հաշւելու մէջ, իսկ բուրլին  
հաշւելու մէջ սխալւում է ի վնաս իրեն: Հարցրու նրան,  
թէ ի՞նչը նրա համար աւելի լաւ է. - աշխատել առանձին  
և դեսեատինից ստանալ 50 փութ հացահատիկ, թէ՛ աշխատել  
կոմմունայի մէջ, և ստանալ 100 փ. դեսիատինից, երբ գոր-  
ծերը կարգի կընկնեն ու Խորհրդային իշխանութիւնից  
կստացւեն մեքենաներ:

Գիւղացի.— Այդ բոլորը ես կասեմ, երբ կարիք դգացւի:  
Բայց և այնպէս խօսքը խօսք է և նրա մէջ քչժ չկայ: Այ՛ո,  
եթէ մեր գիւղացիներին որեւէ օրինակ պատմւի, որ եղել են  
կոմմունիստներ, և ներկայումս էլ կան, որ գործը այնտեղ լաւ  
է գնում: Իսկ գլխաւորն է, ցոյց աւել նրանց, որ կարելի է  
աշխատել առանց վեճի և 3 ժամ չխօսել այն մասին, թէ ով  
պէտք է աշխատի, երբ ամբողջ աշխատանքը կարելի է կէս  
ժամում վերջացնել: Մեր ժողովուրդն էնպէս է, որ իւրաքան-  
չիւրը վախենում է, թէ իրան կխաբեն, որ նրա կոպէկը ու-  
րիշին կտան: Պէտք է ցոյց տալ նրանց, որ կարելի է կոպէ-  
կը չհաշւել, բայց բոլորը կարող են կուշտ լինել:

Բոլշևիկ.— Եթէ ուզում ես, օրինակ կարելի է գտնել  
Դու գիտես, թէ ովքեր են դու խոբոռները:

Գիւղացի.— Լսել եմ. դա մի տեսակ հաւատ է. նրանք  
ինչ որ սեկտանտներ են:

ԲՈՂԸ ԼԻԿ.—Գիւղում ձերոնց դու հէնց այդ դու խա-  
բոռն երի մասին էլ պատմիր: Ամենից առաջ դու մի մոռա-  
ցիր, որ դրանք ինչ որ երևելի օտարերկրացիներ չեն, այլ  
մեր Տամբովի, Վարոնեժի, Պոլտավայի նահանգների նոյն ռաշ-  
պարներն են: Դանի ապրել կարելի էր, նրանք ապրում էին  
Ռուսաստանի հարաւում և Կովկասում: Ունէին իրենց հա-  
մայնական տնտեսութիւնը, որովհետեւ նրանց հաւատի համա-  
ձայն մարդկանց մօտ ամեն բան ընդհանուր պէտք է լինի:  
Երբ ցարական կառավարութիւնը սկսեց նրանց դէմ ձեռք  
առնել խիստ հալածանքներ, այն ժամանակ նրանք տեղափոխ-  
ւեցին Կանադա՝ Նիւսիսային Ամերիկայում: Այնտեղ նրանք  
սարքւեցին իրենց կոմմունաներով, սկսեցին տնտեսութիւն  
և այժմ կան այնպիսի կոմմունաներ, որոնք չգիտեն, թէ ուր  
տեղաբերեն իրենց բաւիքները: Աւելորդ անասուններ, հացը  
տանեակ հազարաւոր փթերով: Նրանց ուսմունքի համա-  
ձայն փող դիզել չի կարելի: Դէ տես, կան այնպիսիները, որ  
տանջում են պակասութիւնից, իսկ մեր դուխարոռները  
աւելորդից: Բացի դրանից, այնտեղ ոչ ոք սեփականութիւն  
չունի: Ամեն բան համարւում է հասարակական և խմբական  
հերկումի աշխատանքի մէջ բոլորը մասնակցում են ընկերա-  
կան սկզբունքների համաձայն: Ել ի՞նչ օրինակ է հարկաւոր  
բեզ, ցոյց տալու, որ ռուս գիւղացին ընդունակ է աշխա-  
տել կոմմունայի մէջ:

Գիւղացի.—Իսկ դուխարոռները ստացւած բերքը չեն  
բաժանում իրար մէջ:

ԲՈՂԸ ԼԻԿ.—Ոչ մի բաժանում: Ամեն բան հաւաքւում  
է հասարակական ամբարը, որտեղից իւրաքանչիւրը վերցնում  
է այնքան, որքան որ նրան հարկաւոր է: Լինում են ընդհա-  
նուր ճաշկերույթներ:

Գիւղացի.—Մեր կանանց դժւար է հասկացնել ընդ-  
հանուր ճաշկերույթների օգուտը, բայց չէ՞ որ նրանց համար  
այդ բանը աւելի օգտակար է:

ԲՈՂԸ ԼԻԿ.—Մենք գեռ ևս չենք թօսում կոմմունական  
խոհանոցների մասին, բայց վերջ ի վերջոյ դրան կհասնենք:  
Մեր կոմմունայի մէջ, ենթադրենք, մասնակցում են 30 ընտա-  
նիք: Ստիպւած ենք լինելու ունենալ 30 խոհանոց, որոնցում  
պէտք է զբաղւեն առնւազը 30 կին, մինչ դեռ կարելի է ու-  
նենալ մի մեծ, մաքուր խոհանոց, նշանակել այնտեղ օրական  
2-3 կնոջ հերթապահութիւն և ճաշ պատրաստել ամբողջ  
կոմմունայի համար: Եւ ճաշը աւելի լաւ կլինի, և աշխատա-  
ւոր ձեռներ աւելի քիչ կգործադրւեն: Կգոյ յաճանակ, որ  
քաղաքներում և գիւղերում սեփական ամանները դէն կը  
դրւեն բոլորովին և բոլորը կսկսեն սնել հասարակական սե-  
ղանատներում: Այնտեղ կլինի մաքուր և լուսաւոր, կերակու-  
րը՝ լաւ պատրաստւած, կնւագէ երաժշտութիւնը, զրամֆօնը:  
Մեծ ճանապարհ պէտք է անցնենք, մինչև որ հասնենք փոք-  
րիկ խրճիթից, ուր երեխաները սողոսկում են խոնկորների  
հետ, համայնական տներին, համայնական խոհանոցներին,  
երաժշտութեանը, էլեկտրական լուսաւորութեանը՝ մօմի փո-  
խանակ:

Գիւղացի.—Եւ իսկապէս ինչո՞վ ենք մենք վատ դու-  
խարոռներից: Նրանց մօտ կոմմունա դուրս գալիս է, իսկ մեր  
առաջ ճանապարհները փակւած են, ինչ է: Պատմիր սկզբից  
թէ ինչպէս պէտք է բոլորը սարքել, կաշխատեմ հասկացնել  
մեր գիւղացիներին:

ԲՈՂԸ ԼԻԿ.—Երբ ամբողջ գիւղին կրացատրես, թէ ինչ  
բան է կոմմունան և ինչ օգուտներ կայ նրանից, ամենից ա-  
ռաջ իմացիր, թէ ցանկանում է արդե՞օք ամբողջ գիւղը կոմ-  
մունա կազմակերպել, որովհետեւ կան այնպիսիները, որոնք  
համաձայն չեն լինի: Հաւանականաբար շատերը չեն համաձայ-  
նի և չհամաձայնողները կլինեն կամ հարուստ գիւղացիներ,  
կամ հարուստ գիւղացիների զրութեանը հասնել աշխատող  
մարդիկ: Երբ կոմմունայի մէջ մտնել ցանկացողները կբաժան-  
ւեն, հարկաւոր կլինի կանոնադրութիւն մշակել: Վերցրու-



մի քանի կանոնադրութիւններ, որոնք արդէն տպւած են և կարդա նոր կոմմունարներին: Որ կանոնադրութիւնը որ աւելի համապատասխան կերևայ, այն էլ կգործադրէք: Իւրաքանչիւր անդամ կոմմունայի մէջ մտնելիս պարտաւոր է ստորագրել և խօսք տալ, որ ամեն բանի մէջ կենթարկուի կոմմունայի կանոններին, քանի դեռ այդ կանոնները չեն փոխուած կոմմունայի կողմից ձայների մեծամասնութեամբ:

Յետոյ պէտք է պարզել, թէ կոմմունաներին ինչքան հոգ է ընկնում և այդ հոգը բաժանել ընդհանուր զիւղին պատկանող հոգից: Պէտք է պարզել, թէ ինչքան անասուն, գործիքներ ու սերմնացու կայ, որպէսզի միանգամից պարզ լինի, թէ ինչ է պակասում կոմմունային և ինչ հարկաւոր է ձեռք բերել: Դրամական վճարները սկզբնական ծախսերի համար, պէտք է վճարեն բոլորը, ինչքան որ որոշւած կլինի:

Յետոյ պէտք է ձեր գոյութեան մասին յայտնէք երկրագործութեան զաւառական և նահանգական կոմիտեաներին և այնտեղից օգնութիւն խնդրէք: Հարկաւոր է խնդրել ամենից առաջ ուղարկելու ագրոնոմ, որը պէտք է կոմմունայի տնտեսութիւնը հէնց առաջին բայերից դնի ուղիղ ճանապարհի վրայ: Կոմիտարիատից հարկաւոր է խնդրել սերմնացու, յետոյ ամենակարեւոր մեքենաները, ամենից առաջ զութաններ, պարզել, թէ ինչպէս պէտք է ստանալ արհեստական պարարտացում և այլն: Երբ կոմմունական աշխատանքի համար բոլոր պէտք եղածը պատրաստ կլինի, այն ժամանակ համարձակ կարելի է սպասել խմբական առաջին աշխատանքի սկզբին:

Գիւղացի. — Ուրիշ շատ բաներ էլ ուզում էի բեղանից հարցնել, բայց աւելի լաւ է լեռնաձորներ մի ուրիշ անգամուայ: Վերջին խօսքում միայն տաս ինձ, թէ ի՞նչ բաներ են սպառողական կոմմունաները: Դա նոյն բանն է, ինչ որ դու բացատրեցիր, թէ ուրիշ բան է: Եկաւ մեզ մօտ պա-

րենաւորման լիազօրը և սպառողական կոմմունաների մասին կարծէք թէ այլ բան էր ասում:

ԲՈՂԷԼԻԿ. — Լաւ, որ դու յիշեցրիր ինձ այդ մասին: Սպառողական կոմմունաները, դրանք այն կոմմունաները չեն, որոնց մասին մենք խօսեցինք: Մեր կոմմունաները, — դրանք արտադրողական կոմմունաներ են. նրանց օգնութեամբ մենք ցանկանում ենք իւրաքանչիւր դեռեաւորից աւել հաց ստանալ, քիչ աշխատանք գործադրել, իսկ աշխատանքի մի մասը մեքենաների վրայ դնել: Իսկ սպառողական կոմմունաները ուրիշ նպատակ ունեն, այսինքն այն ապրանքներն ու հացը, որոնք արդէն արտադրւած են այնպէս բաժանել, որ հնարաւոր եղածին չափ բոլորն էլ հաւասար չափով ստանան: Օրինակի համար վերջնենք քո գիւղը: Այնտեղ աւելորդ հացը ներկայ բերրի տարում ասենք կլինի 3000 փութ: Ահա այդ աւելորդը հաշի է առնւում և հաւաքւում է հասարակական մագազինում: Ոչ ոք իր ունեցած աւելորդ հացը ինքը առանց զիւղական խորհրդի դիտութեան մասնաւոր տեղեր վաճառելու իրաւունք չունի: Այդ 3000 փ. աւելորդ հացը արւում է Խորհրդային Իշխանութեանը հաստատուն գներով, իսկ դրա փոխարէն զիւղը ստանում է կտրեղէն և երկաթ նոյնպէս հաստատուն արժէքով, կամ թէ մի մասը ստանում է փողով: Խորհրդային Իշխանութիւնը հաշիւ է տեսնում ոչ թէ քեզ հետ, կամ Պետրով, Իվանովի հետ առանձին, առանձին, այլ ամբողջ զիւղի հետ միանգամից: Իսկ դուք ինքներդ այստեղ կհաշէք, թէ ով ինչքան աւելորդ հաց է տւել և ինչքան դրա փոխարէն իրաւունք ունի ապրանք կամ փող ստանալ: Եթէ ձեր կոմմունան, որը դու ուղում ես կազմակերպել, այդ 3000 փ. փոխանակ հաւաքէ 1500 փ., այն ժամանակ նա կոտանայ այդ քանակութեան հացի համապատասխան ապրանք կամ փող:

Գիւղացի. — Շատ լաւ, այժմ ես գլխաւոր բանը հասկացայ: Ցտեսութիւն: Շուտով կգամ կրկին մեզ մօտ թէ ոչ:



NL0210723

Հայաստանի Կոմպոզիցիոնական Կուլակ, հրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Ռուսաստանի Կոմպոզիցիոնական Կուլակները (Բոլշևիկներ) ծրագրեր:
- 2) III Ինտերնացիոնալի Ղլատֆոնման:
- 3) Ն. Լենին. «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին»—գինը՝ 50 կոպ.
- 4) «Հայաստանի Կոմպոզիցիոնական Կուլակներին ներկայացուցիչի զեկուլոմը III Կոմպոզիցիոնական Ինտերնացիոնալին»—գինը՝ 60 կոպ.
- 5) «Կոմպոզիցիոնական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարիատին»—գինը՝ 1 ռ.
- 6) Ն. Լենին. «Երբորդ Ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»—գինը՝ 1 ռ.
- 7) Ն. Լենին. «Ի՞նչ պետք է լինէր մեր կուլակներին անունը»—գինը՝ 50 կ.
- 8) ՊԵՐՆԵՊՈՒԿ. «Թալանի Բաժանումը»—գինը՝ 1 ռ.
- 9) ՊԵՐՆԵՊՈՒԿ. «Իմպերիալիզմ և Արմէնիա»—գինը՝ 3 ռ.
- 10) Վարդիւր Լատոյ՝—գինը՝ 5 ռ.

Հայկական Գործերի Կոմիտարիատի հրատարակութեամբ լոյս են տեսել

- 1) Թ. Սոս. Ֆեդ. Խորհուրդներ շանրապետութեան Սահմանադրութիւնը:
  - 2) Ն. Լենին. «Նախնական Ըմբոսիկներն ըստ Ինտերնացիոնալի»—գինը՝ 1 ռուբ.
  - 3) Վ. Ֆրիշե. «Պրոլետարական պոէզիան»—գինը՝ 2 ռ.
  - 4) Զ. Զեմել. «Բերնարտի յետոյ» (Ջեկուլոմը Խորհուրդներ 5-րդ Համադու-մարին) —գինը՝ 1 ռ.
  - 5) Ներշնի. «Դէպքեր Բագուում, Է. Յ. Դաշնակցութիւնը և Բագուի Խորհրդային Իշխանութիւնը»:
  - 6) Ն. Լենին. «Կարլ Մարքս» (Համառօտ կենսագրութիւնը և մարքսիզմի Հարադրութիւնը) —գինը՝ 1 ռ. 50 կ.
  - 7) Ներշնի. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան» —գինը՝ 1 ռ.
  - 8) Ն. Բոնիւրի. «Կոմպոզիցիոնալի ծրագրեր» —գինը՝ 3 ռ.
  - 9) Մ. ՊԵՐՆԵՊՈՒԿ (Վելոման) «Լուսին և իր զեքը համաշխարհային պատե-ժեշ» —գինը՝ 3 ռ.
  - 10) ՊԵՐՆԵՊՈՒԿ. I «Կոմպոզիցիոնական Կուլակներին Գերմանիայում».
- II. «Կարլ Լեբկինս» (Լեբկինսի նկարագիր) —գինը՝ 1 ռ.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նօտան Վիլսոնին» —գինը՝ 75 կ.
  - 12) «Միասնական աշխատանք»-ին դպրոցի կանոնադրութիւնը —գինը՝ 2 ռ.
  - 13) Հ. ՅՈՒՍԷՓԵՆ. «Դէպի Բաշարական կոլ»:
  - 14) Գ. ԶԻՆՈՒՆԵՐ. Ի. ԿԱՄԵՆԵՐ և Լ. ՏՐՈՒՄԵՐ —«Ն. Լենին» (Վլադիմիր Իլիչ Ն. Լենին) —գինը՝ 2 ռ.
  - 15) Ս. ՄԱՐԿՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ —«Կոմպոզիցիոնական Մանիֆեստ» —Ղլեխանովի, և հեղինակների առաջարկներով —գինը՝ 3 ռ.
  - 16) Վ. ԼՍՔԱՐԳ. «Տոտեսկան» —Ղլեխանովի և Կոմպոզիցիոնալի —գինը՝ 50 կ.
  - 17) ՊԵՐՆԵՊՈՒԿ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչպէս է նա կազմուած» —գինը՝ 2 ռ.
  - 18) «Փռանիական Մեծ Յեղափոխութիւնը» —գինը՝ 3 ռ.
  - 19) Վ. ԿԵՐԶԵՆՅԵՐ. «Ինչպէս վերել ժողովը» —գինը՝ 2 ռ. 50 կ.
  - 20) Գ. ԵՐԵՄԵՅԵՐ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութիւն» —գինը՝ 1 ռ.
  - 21) ՊԵՐՆԵՊՈՒԿ. «Ռուս հետ էր դուր, գիւղացիք» —գինը՝ 50 կ